



«ԱՄՆ ՄՁԳ Հայաստան, ՄՊՀՀ» ծրագիրը նշում է իր գործունեության առաջին տարեդարձը

Ընդգրկուն ծրագրերը և գործողությունները աջակցում են սոցիալական պաշտպանության խթանմանը Հայաստանում

«ԱՄՆ ՄՁԳ- Հայաստան, Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման» (ՄՊՀՀ) ծրագիրը, որը ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից Հարավային Կովկասում մինչ օրս շնորհված սոցիալական բարեփոխումների խոշորագույն ծրագրերից է, այս ամիս նշում է Հայաստանում իր գործունեության մեկամյա տարեդարձը:

ՄՊՀՀ-ն ընդգրկուն նախաձեռնություն է, որը միտված է օժանդակելու սոցիալական ապահովագրության տրամադրման բարելավմանը, աշխատաշուկայի բարեփոխումների և աշխատանքային անվտանգության չափանիշների ընդունմանը և խոցելի խմբերի կախվածության նվազեցմանը պետական աջակցությունից: Ծրագիրը (2006-2011թթ.) հաստատվել է 2006թ.-ին և մեկնարկել 2007թ.-ին: ՀՀ կառավարության իր գործընկերների հետ միասին, այն հասցեագրում է առկա սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացումը, ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը, պետական-մասնավոր հատվածի համագործակցության խթանումն ու սոցիալական ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների կարողությունների բարելավումը:

«Տոնելով մեր գործունեության առաջին տարեդարձը՝ մենք ի սրտե շնորհակալ ենք ՀՀ կառավարության և հանրության կողմից մեզ ցուցաբերված աջակցության համար, ինչպես նաև գոհ ենք մեր ծրագրերի անմիջական արդյունքով», - հայտնեց ՄՊՀՀ ծրագրի տնօրեն դոկտոր Էմի Ռեմմեր: Ծրագրի նվաճումները իրականալի են դարձել մի քանի գործընկերների՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և ՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների աշխատանքային խմբի հետ արդյունավետ համագործակցության շնորհիվ: Նշանակալի աշխատանքներ են կատարվել նաև ՀՀ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության, ՀՀ աշխատանքի պետական տեսչության, Նորք տեղեկատվա-վերլուծական կենտրոնի, Բժշկասոցիալական փորձաքննության գործակալության, Աշխատանքի ու սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ու ՀԿ գործընկերների հետ համատեղ:

2007թ. տարին նշանավորվեց մի շարք ձեռքբերումներով: Այն է՝

- կենսաթոշակային համակարգի բարեփոխման վիճակագրական մոդելի մշակում,
- աշխատաշուկայի լայնածավալ հետազոտությունների և վերլուծության խթանում,
- Երևանում իր նախադեպը չունեցող աշխատաշուկայի կազմակերպում՝ 12 գործընկերների, 96 գործատուների և ավելի քան 5,000 գործազուրկների մասնակցությամբ,
- աջակցություն համակարգված մասնագիտական անվտանգության և առողջության նորմերի մշակմանն ու դրանց վերաբերյալ իրազեկության խթանմանը,
- կառավարության հետ սոցիալական համաձայնագրի կայուն մեխանիզմի մշակում, որի արդյունքում հինգ տեղական ՀԿ-ներ պայամանագիր կնքեցին ՀՀ ԱԱՀՆ-ի և ՄՊՀՀ ծրագրի հետ՝ տրամադրելու նոր ծառայություն (ցերեկային խնամք հաշմանդամների համար) Երևանում և հարևան մարզերում 2008 թ.-ի ընթացքում:

Գործընկերների հետ համատեղ ծրագիրը նաև ակտիվորեն ընդգրկվեց մասնագիտական-զարգացման գործընթացներում և հատուկ ուշադրություն հատկացրեց սոցիալական



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

**USAID ARMENIA, SOCIAL PROTECTION SYSTEMS
STRENGTHENING PROJECT**

**ԱՄՆ ՄԶԳ ՀԱՅԱՍՏԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԴՁՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

պաշտպանության ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը: Այս աշխատանքների մեծ մասը մանրամասնորեն ներկայացվել են «ՄՊՀՀ ձեռքբերումները» տարեկան տեղեկագրի առաջին համարում, որը լույս է տեսել այս շաբաթ:

ՄՊՀՀ ծրագիրն իրականացվում է «ԱԵԿՈՄ միջազգային զարգացում» (նախկինում TSG) ընկերության կողմից՝ 6 ենթակապալառուների հետ համատեղ, որոնք են «Էմերջինգ մարքեթս գրուփը», «Դ-իվելոփմենթ ասոշիեյթսը», Հայաստանում ամերիկյան համալսարանը, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը», Հայ օգնության միությունը և «ՎիՋիԷմ փարթներս» ընկերությունը:

Ծրագրի ապագա գործողությունները կլինեն ներկայիս առաջնահերթություններին համահունչ, օժանդակություն կցուցաբերի քաղաքականությունների և օրենսդրության մշակման գործում, ինչպես նաև բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկման բարձրացման գործում, նպատակ ունենալով արդյունավետ, կայուն և թափանցիկ համակարգերի ստեղծման օժանդակումը սոցիալական պաշտպանության ոլորտում: